

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված ՄՄՀ Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը (հաստատված ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում, 05.03.99թ.)

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 2017թ. հունվար-մարտին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 9 ցուցանիշների վերաբերյալ.

1. Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի

	Ամբողջ բնակչությունը	Կին	1 000 մարդ Տղամարդ
2015 թ. ապրիլի 1-ի դրությամբ	3 006.7	1 569.4	1 437.3
2016 թ. ապրիլի 1-ի դրությամբ [◇]	2 994.4	1562.0	1432.4
2017 թ. ապրիլի 1-ի դրությամբ	2 981.5	1555.3	1426.2

2. ՀՀ բնակչության կյանքի սպասվող տևողությունը հաշվարկված ծննդից, ըստ սեռի 2015թ.¹

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
Հայաստանի Հանրապետություն	75.0	78.2	71.7
Քաղաքային	75.3	78.3	71.9
Գյուղական	74.6	77.9	71.2

տարի

3. Մանկական մահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2015թ. հունվար-մարտ	8.8	8.1	9.4
2016թ. հունվար-մարտ [◇]	8.1	7.9	8.8
2017թ. հունվար-մարտ	8.7	9.8	7.6

1 000 կենդանի ծնվածի հաշվով

4. Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2015թ. հունվար-մարտ	10.3	9.5	11.0
2016թ. հունվար-մարտ [◇]	9.7	9.0	10.3
2017թ. հունվար-մարտ	10.2	11.3	9.2

1 000 կենդանի ծնվածի հաշվով

5. Մայրական մահացության գործակիցը, 2017թ. հունվար-մարտին կազմել է 11.7 միավոր (1 դեպք), 100 000 կենդանի ծնվածի հաշվով, 2016թ. հունվար-մարտի 32.9[◇] միավորի համեմատ:

¹ Տարիների այն թիվն է, որ ծնվող սերունդը միջին հաշվով կապրի, պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում մեկ տարիքից հաջորդին անցնելիս մահացությունը՝ յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին:

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6. Ուսումնառության միջին տևողությունը դպրոցներում 2016/2017 ուսումնական տարում կազմել է 12 տարի:
12. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2016թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 1 697 532 դրամ (3 533 ԱՄՆ դոլար կամ 3 192 եվրո):
14. Գործազրկության մակարդակը¹ 2016թ. հոկտեմբեր-դեկտեմբերին (IV եռամսյակ) կազմել է 17.4%, ընդ որում կանանցը՝ 15.5%, տղամարդկանցը՝ 19.0%:
15. 2016թ. հոկտեմբեր - դեկտեմբերին (IV եռամսյակ) տնտեսության մեջ զբաղված² է եղել ՀՀ բնակչության 34.9%-ը, այդ թվում կանանց՝ 31.8%-ը և տղամարդկանց՝ 38.2%-ը:

¹ Ցուցանիշը հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված տնային տնտեսությունների աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքների հիման վրա: